ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ԾՆՆԴՅԱՆ 165 ԵՎ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Մարտի 29-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Նիստերի դահլիճում տեղի ունեցավ ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Կարլ Մարքսի ծննդյան 165 և մահվան 100-ամյակին։

Նիստը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

— Իրադարձի ճանաչման պատմության ընթացքում,— ասաց նա,— պահանջվեց համարյա երկու հազարամյակ, մինչև մարդուն հաջողվեց հասկանալ մոլորակների շարժման պարզ օրինաչափությունները։ Կոպեռնիկոսը, հրաժարվելով երկրակենտրոն համակարգից, ապացուցեց, որ այդ օրինաչափությունները ակներև են դառնում, երբ մենք ուսումնասիրում ենք մոլորակների շարժումը Արեգակի նկատմամբ։

Մարդկային հասարակության մեջ շարժման ու զարգացման օրինաչափությունների հայտնաբերումը, սակայն, ավելի բարդ էր ու ավելի դժվարին։ Հասարակական երևույթները, այնուհետև ասաց Վ. Հ. Համբարձումյանը, շատ ավելի դժվար էր օբյեկտիվորեն ճանաչել, քան մեխանիկական համակարգերում տեղի ունեցող երևույթները։ Եվ այդ հաջողվեց միայն Մարքսի հանճարին։ Մարքսի կողմից սկսված գիտական հեղափոխությունը չսահմանափակվեց հասարակական գիտությունների բնագավառով։ Այն տարածվեց բոլոր գիտությունների վրա, քանի որ Մարքսը հանդիսացավ դիալեկտիկական մատերիալիզմի ստեղծողը։ Մարքս-Լենինյան փիլիսոփայությունն ունի մեծագույն նշանակություն ինչպես հասարակական, այնպես էլ բնական գիտությունների զարգացման համար։ Հենց դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքներից ելնելով՝ Մարքսին հաջողվեց նոր տեսանկյունով վերլուծել ու հիմնավորել հասարակական երևույթները։

Մարքսիստական տեսությունը համակողմանի զարգացրեց Վ. Ի. Լենինը։ Մարքսիզմը իր շարունակությունը և հետագա ստեղծագործական զարգացումը գտավ Լենինիզմի մեջ։ Մարքսի ուսմունքի ազդեցության ներքո աճեց ու զարգացավ Լենինի հանճարը, նրա հեղափոխական միտքը և կորովը, մի հանճար, որ ռեալ ճանապարհ բացեց դեպի մարդկության լուսավոր ապագան։

Մարդկության կոմունիստական ապագան կերտելու համար, վերջում ասաց Վ. Հ. Համբարձումյանը, մենք սովետական մարդիկ, սոցիալիստական երկրների ժողովուրդները պետք է աշխատենք, աշխատենք ու աշխատենք։ Ավելի մեծ խնդիրներ են դրվում սովետական գիտության առջև։ Եվ այս գործում Մարքսի ու Լենինի ժառանգությունը ծառայում է որպես փարոս, որպես մշտական ուղեցույց։

«Կարլ Մարքսը և սոցիալիզմի քաղաքատնտեսության պրոբլեմները» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը։

— Մարքսի ամբողջ տնտեսագիտական տեսության կարևորագույն բաղկացուցիչ մասը նրա տնտեսագիտական ուսմունքն է,— ասաց զեկուցողը։— Մարքսի տնտեսագիտական աշխատությունների գլխավոր բովանդակությունը կապիտալիստական արտադրական հարաբերությունների բազմակողմանի և խոր վերլուծությունն է։ Բայց նրա ծառայությունը ամենևին չի սահմանափակվում կապիտալիզմի հետազոտմամբ։ Մարքսի աշխատություններում կան հանճարեղ գիտական հայտնագործություններ, որոնք վերաբերում են սոցիալիստական էկոնոմիկայի տեսության հիմունքներին և էլեկտրային դրույթներ են սոցիալիզմի քաղաքատնտեսության մշակման համար։

Նիստին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Դալլաքյանը, Լ. Ն. Ներսիսյանը։